ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՖՐԱՆՍԵՐԵՆ

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2026

Պատասխանատու՝ **ԱՐԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն…………………………………….……..… 3
2. Նախաբան ………………………………………………………... 4
3. Թեստի կառուցվածքը…………………………………...…..… 5
4. Թեստի կառուցվածքային տեսակների համամասնությունը…. 5
5. Առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները և ձևաթղթի լրացման կարգը.........6
6. Առաջադրանքներում ընդգրկված նյութը.................................. 12

# ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են միասնական քննությունների թեստերի կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաթուղթը լրացնելու կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթղթի նմուշը:

Միասնական քննության թեստերը կազմվում են ուղեցույցի համաձայն:

**Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:**

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը ներառում է 19 առաջադրանք՝ 80 ենթաառաջադրանքով:

Թեստային առաջադրանքները հետևյալ երկու կառուցվածքային տիպերի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Առաջադրանքների կատարման համար հատկացվում է 150 րոպե:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

| Հ/Հ | Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի | Ենթաառաջա-դրանքների քանակը | Առավելագույն միավորը |
|---|---|---|---|
| 1 | Ընտրովի պատասխանով | 50 | 50 |
| 2 | Կարճ պատասխանով | 30 | 30 |
| | Ընդամենը | 80 | 80 |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### *Առաջադրանքների կառուցվածքային տեսակները*

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝**

- *Կառուցվածքը:* Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

*Նմուշ.*

| 30 | **Գտնել նախադասության ընդգծված անդամին վերաբերող հարցը :** |
|---|---|

**<u>Dans une semaine</u> nos amis partiront pour la France.**

a) Qui partira pour la France?
b) Où est-ce que mes amis partiront dans une semaine?
c) Quand nos amis partiront-ils pour la France?
d) Que feront nos amis dans une semaine?

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:




- *Ձևաթղթի լրացման կարգը*: Ընտրված տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրվում է «X» նշանը.

**Կարճ պատասխանով առաջադրանքներ՝**

*Կառուցվածքը:* Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն: Տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը՝ մեկ կամ մի քանի թվեր, պետք է գրել ինքնուրույն:

*Ներկառուցվածքային տարատեսակները:*

**ա. Համարների ընտրությամբ ենթաառաջադրանքներ:**

- *Կառուցվածքը:* Անհրաժեշտ է ընտրել և գրել պահանջին համապատասխանող բառերի համարները:

*Նմուշ.*

**58** **Գտնել տրված բառի հականիշները:**

**défaut**

1. vertu
2. facture
3. qualité
4. courage

*Գնահատման չափանիշը:* Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ, առավելագույնը՝ 5: Թվերի **հերթականության պահպանումը պարտադիր չէ**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **58** | 2 | 4 | 5 | | |

**բ. Համապատասխանեցմամբ ենթաառաջադրանքներ:**

- *Կառուցվածքը:* Տրված են նախադասությունների կամ բառերի երկու խմբեր: Անհրաժեշտ է II խմբից ընտրել I խմբում տրված նախադասություններին կամ բառերին համապատասխան բառեր կամ արտահայտություններ: II խմբում դրանց թիվը 1-ով կամ 2-ով ավելի է:

*Նմուշ.*

**73** **Համապատասխանեցնել տրված բառերն ու բառակապակցությունները և դրանց թարգմանությունները:**

| | |
|---|---|
| a. en vain | 1. օրը ցերեկով |
| b. en pleine jour | 2. թանկ արժենալ |
| c. coûter cher | 3. թանկ վճարել |
| d. du gibier | 4. իզուր, անտեղի |
| | 5. որսամիս |

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Ձևաթղթի լրացման կարգը:* Անհրաժեշտ է յուրաքանչյուր տառի ներքևի վանդակում գրել տարբերակի համարը՝ **ըստ իմաստային համապատասխանության**:

| | A | B | C | D |
|---|---|---|---|---|
| 73 | 5 | 4 | 1 | 3 |

**գ. Տեղադրմամբ ենթաառաջադրանքներ:**

- *Կառուցվածքը:* Ենթաառաջադրանքներում տրված է տեքստ, որում բաց են թողնված բառեր: Տրված 5 նախադասություններից պետք է ընտրել 2-ն ըստ իմաստային համապատասխանության և գրել վանդակներում՝ **չխախտելով հերթականությունը:**

*Նմուշ.*

**70** **Ընտրել նախադասությունները՝ ըստ իմաստային հաջորդականության:**

La fête des lanternes est le cinquième jour du huitième mois du calendrier chinois. A Hong Kong, on célèbre cette fête avec beaucoup de lanternes. ______________________________ . La fête des lanternes s’appelle aussi la fête des gâteaux-lune. ______________________________ La Fête des Lanternes est une très grande fête à Hong Kong et en Chine. On décore les bâtiments avec des lumières et des fleurs.

1. Le soir, tout le monde va au restaurant.
2. Le soir, tout le monde allume des lanternes.
3. Pendant cette fête on travaille toute la nuit.
4. Pour cette fête on prépare des gâteaux en forme de lune.
5. C’est une fête qu’on ne célèbre pas à Hong Kong.

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:
- *Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը թվերի շարք է, որում թվերը պետք է դասավորել **ըստ իմաստային կապի հաջորդականության**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:




**դ. Վերադասավորմամբ ենթաառաջադրանքներ:**

- *Կառուցվածքը:* Ենթաառաջադրանքներում անհրաժեշտ է վերադասավորել միավորների համարներն ըստ **իմաստային կապի հաջորդականության:**

*Նմուշ.*

**54** **Կազմել նախադասություն՝ վերադասավորելով տրված միավորները:**

1. dérangé
2. je suis
3. de vous
4. avoir
5. désolé

*Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը թվերի շարք է, որում թվերը պետք է դասավորել **ըստ իմաստային կապի հաջորդականության:** Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:




**Ձևաթղթում սխալ նշված պատասխանները** փոխելու համար տրված է 5 հնարավորություն. 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 3-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների:
Ընտրովի պատասխանով առաջադրանքների պատասխանը փոխելու համար համապատասխան տեղերում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և սյունակի համապատասխան վանդակում դրվում է «X» նշանը:
Օրինակ՝




Կարճ պատասխանով առաջադրանքի դեպքում համապատասխան տեղում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և լրացվում են թվերը:
Օրինակ՝






## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Ֆրանսերենի թեստի առաջադրանքների կատարման համար նախատեսվում է գիտելիքների հետևյալ ծավալը.

**Բառապաշար: Բառագիտություն**: Բառեր և իդիոմատիկ արտահայտություններ (կայուն բառակապկցություններ): Ածանցում և բառաբարդում: Ֆրանսերենի ամենատարածված նախածանցներն ու վերջածանցները:

**Ուղղագրություն:**

**Ձևաբանություն**

**Գոյական անուն**. թիվ, սեռ:

**Հոդ**: Որոշյալ (le, la l', les), անորոշ (un, une, des), միաձուլված (du, des, au, aux), մասնական (du, de la, de l') հոդեր: Հոդի բացակայությունը:

**Ածական անուն:** Ածականների շարահյուսական գործառույթները: Ածականի հոլովումը: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը և կիրառումը:

**Թվական:** Թվականի տեսակները:

**Դերանուն**: Տեսակները: En և y դերանունների գործածությունը:

**Բայ.** Կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր, բայ-հանգույց:

*Բայի եղանակները*: (Indicatif, Conditionnel, Subjonctif, Impératif),
սեռը (voix ou forme active et passive):

***Դերանվանական բայեր:***

*Բայի անդեմ ձևերը:* (Infinitif, participe présent, participe passé, gérondif):

**Մակբայ**: Մակբայների տեսակները: Ձևի մակբայների համեմատության աստիճանները:

**Նախդիր:** Ամենագործածական նախդիրները: à, de, en, dans, par, pour, contre, entre, parmi, sur, sous, avec, sans, avant, après, devant, derrière, depuis, vers, chez

**Շաղկապ:** Համադասական և ստորադասական շաղկապներ:

**Շարահյուսություն:** Պարզ և բարդ նախադասություններ: Ժխտական և հարցական նախադասություններ: Ուղղակի և անուղղակի խոսք:

202_ թ. միասնական քննություն

# Պատասխանների ձևաթուղթ

## Ֆրանսերեն

ԳԹԿ անձնական համար

ազգանուն

անուն հայրանուն

---

**Եղե՛ք ուշադիր**

*Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
*Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 0 1 2 3 4 5 6 7 8 9
*Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնջերում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

0 8

Թեստ № 1 2 3 4

### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| a | | | | | | | | | | | | | | | | | | | | a |
| b | | | | | | | | | | | | | | | | | | | | b |
| c | | | | | | | | | | | | | | | | | | | | c |
| d | | | | | | | | | | | | | | | | | | | | d |

Պատասխանի համարը

| | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| a | | | | | | | | | | | | | | | | | | | | a |
| b | | | | | | | | | | | | | | | | | | | | b |
| c | | | | | | | | | | | | | | | | | | | | c |
| d | | | | | | | | | | | | | | | | | | | | d |

Պատասխանի համարը

| | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| a | | | | | | | | | | | | | a |
| b | | | | | | | | | | | | | b |
| c | | | | | | | | | | | | | c |
| d | | | | | | | | | | | | | d |

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

51
52
53
54

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

55 56 57 58
59 60 61 62
63 64 65 66
67 68 69 70

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

71 72

| | A | B | C | D |
|---|---|---|---|---|
| 73 | | | | |
| 74 | | | | |
| 75 | | | | |
| 76 | | | | |

| | A | B | C | D |
|---|---|---|---|---|
| 77 | | | | |
| 78 | | | | |
| 79 | | | | |
| 80 | | | | |

### Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխան: a b c d

Կարճ պատ.: A B C D

**Արտագրե՛ք այս նախադասությունը՝**

*Ծանոթ եմ քննության կարգին:*